



„ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ“

(ՔԱՐՈՑ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱՇԻՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒԾ)



Մեր կրոնական պոեզիայի, հոգևոր բանաստեղծության ամենասիրված թեմաներից մեկն է եղել խաղաղության թեման։ Հայոց Առաքելական եկեղեցիներում, միշտ հնչել են խաղաղության օրհներգներն ու ալիլուիաները։ Հայ ժողովուրդը դարեր շարունակ իր տաճարներում աղոթել է և մինչև այսօր էլ ամեն օր աղոթում է «Ամենայն աշխարհի» խաղաղության համար։ Նա ցանկանում է այդ խաղաղությունը «ամենեցուն»՝ բոլոր ազգերին, կրոններին, լեզուներին, բոլոր նրանց, ովքեր կարիք ունեն խաղաղության, խաղաղ ստեղծագործ կյանքի։

Քրիստոնեական ո՛չ մի եկեղեցի, ո՛չ մի ժողովուրդ, իր պատմության ողջ ընթացքում, այնքան բուռն սիրով չի ձգտել խաղաղության, չի պայքարել հանուն խաղաղության, որքան մեր ժողովուրդը։ Հայ ժողովրդի պատմության մեջ կարմիր թելի նման երևում է նրա խաղաղության ձգտումը։ Նա անցյալում զուրկ է եղել խաղաղությունից։ Դարերի ընթացքում միշտ սուր են բարձրացրել մեր երկրի ազատության և անկախության վրա, վիրավորել են մեր ժողովրդի ազգային արժանապատվությունը, արհամարհել են մեր լեզուն և եկեղեցին, ավերել ու ամայացրել են նրա ծաղկուն քաղաքներն ու շեն ավանները, ոչնչացրել նրա ստեղծագործած նյութական և հոգևոր կուլտուրայի հուշարձանները։ Մեր ժողովուրդը ցանկ է, ուրիշներ հափշտակել, կերել են, հազար անգամ ավեր է տեսել, շղթայվել է բազմաթիվ անգամ, մեր դաշտերն ու գետերը հաճախ են ներկվել մեր խաղաղասեր ժողովրդի անմեղ արյու-

նով։ Բայց երբե՛ք նրա հոգում չեն մարել խաղաղության ձգտումն ու վերջնական հաղթանակի նկատմամբ պայծառ հավատն ու հույսը։

Որքան խոր է եղել նրա տառապանքը, այնքան էլ պայծառ է եղել նրա իղձն ու ակնկալությունը խաղաղության համար։ Ինչ է տենչացել մեր ժողովուրդը իր ողջ կյանքում. ունենալ այն ամենը, ինչից զրկված է եղել նա, ունենալ աղատ ու անկաշկանդ կյանք, խաղաղ աշխատանքի պայմաններ և, որ կարևորն է, ապրել խաղաղության, անվտանգության մեջ։ Մեր ժողովուրդը՝ իր դարավոր պայքարի կենսափորձով համոզված է եղել, որ բարու և շարի պայքարը վերջանում է նրանով, որ բարին ի վերջո հաղթանակում է, շարը պարտվում և պատժվում։ Դա մեր ժողովրդի իր անպարտելի ուժի և վերջնական հաղթանակի մասին ունեցած վառ համոզման, նրա լավատեսության ցայտուն արտահայտությունն է. այդ հավատը կազմում է մեր ժողովրդի գաղափարական ողնաշարը։ Հայ ժողովրդի հոգուն խորթ է եղել հոռետեսությունը, շնայած այն բանին, որ նա ծանր, իրավազուրկ, անպաշտպան կյանք է ունեցել, շնայած այդ բոլորին, նրան հատուկ է եղել պայծառ գիտակցություն և խորը համոզում, որ կհաղթի իր բոլոր թշնամիներին։ «Գավազան զօրութեան զխաչ քո խողոր մեզ Քրիստոս, և սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամուոյն»։

Մեր ժողովուրդը, խաղաղ կյանքի պայմաններում, աշխատանքային մեծ սիրազոր ժողովյալ, ժայռերից վարդեր է քաղել, անապատները ծաղկալից բուրաստանների է վերածել, հրաշակերտել է ճարտարապե-

տական հոյակապ կոթողներ, որոնք նրա հանճարի փառքն են պատմում դարերին, զարգացրել է գիրն ու գրականությունը, գեղարվեստն ու կուլտուրան, հնչեցրել իր աշխատանքային ու սիրո սքանչելի երգերը: Խաղաղություն և աշխատանք—ահա թե ինչի՛ է ձգտել մեր ժողովուրդը: Շատ խորը և իմաստուն են եղել մեր ժողովուրդի հայացքները աշխատանքի և խաղաղության մասին: Հայ ժողովուրդը շատ բարձր է գնահատել, և՛ աշխատանքը, և՛ խաղաղությունը:

Մեր աշխատասեր, խաղաղասեր ժողովուրդը միշտ ապրել է իր արդար վաստակով, իր ճակտի քրտինքով, աչք չի ունեցել օտարի հողին, ջրին, հացին: Նրա համար սուրբ է եղել մյուս աշխատավոր ժողովուրդների վաստակը, չէ՞ որ աշխարհում բոլոր նյութական ու հոգևոր բարիքների ստեղծողն է եղել հասարակ աշխատավորությունը: Մեր ժողովուրդը չէր կարող այլ կարծիք ունենալ աշխատանքի մասին: Արդար ու ստեղծագործ աշխատանքի գլխավոր նախապայմանն է եղել միշտ խաղաղությունը, և դրա համար էլ խաղաղության մշտական և ամենազերմ ջատագովն է հանդեսացել աշխատավոր ժողովուրդը, միշտ և ամենուրեք: Աշխատանք և խաղաղություն՝ հայ ժողովուրդի հոգու երկու բևեռներն են եղել:

Մեր կրոնական գրականությունը տոգորված է եղել հենց այս աշխատանքային խաղաղությամբ, որի մեջ պատկերված է մի աշխարհ լավագույն կյանքի պատկերով: «Ձխաղաղութիւն քո տուր մեզ, Տէր»: Մեր ժողովուրդի խաղաղասիրական ձգտումները իրենց արեգորիկ արտահայտությունն են գտել լայն շափով մեր հոգևոր երգերում և աղոթքներում, գիրքի և ցեղեկ մեր ժողովուրդը աղոթել է խաղաղության համար: Նրա միտքը միշտ ճնշված է եղել իրար ետևից արագ հասնող աղետների ծանրության տակ: Նրա մոայլ, անարև կյանքը ստիպել է նրան կրոնի, հավատի սրբությունների մեջ գտնել մխիթարություն, կյանք, օր ու արև, խաղաղություն, աշխարհը և մարդիկ զլացել են նրան այդ կոտորածի երգիչ Շնորհալին, իր «Արևագար»-ի հրաշալի երգերի մեջ, վերանայով լուսոտ առավոտյան միատիկական աշխարհը, ու՛րջս, կյանք, խաղաղություն է հայցում, աղերսում, իր ժողովուրդի, իր երկրի համար, որպեսզի կոտոր Արարիչ Աստվածը պարսպեալ պահեստ է զժողովուրդս իր աստուածային զօրութեամբն»:

Մեր անտիկ գրականության մեջ, մեր հայրենասեր պատմիչներն ու հոգևոր երգասացները հաճախ են փնտրել հայ ժողո-

վրդի անկուր տառապանքների բացատրությունը ու նշել ելքը: Ինչ՞ու՞ ալսքան աղետներ եկել են հայ ժողովուրդի գլխին: Մեր պատմիչները, հրեա ժողովուրդի օրինակով, հին կրոնական տրադիցիոն վարդով, մեր ժողովուրդի թշվառությունը, կեղեքումը, շարժարանքը, համարել են աստվածային պատիժ, և նշել են ելքը «ապաշխարութեամբ» շարիքի, մեղքի, ապականության դեմ պայքարով. պետք է սթափվել «ի ննջմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ, հոգեհորոգ զուարթութեամբ», պետք է ընդմիշտ ազատվել հոգևոր և մտավոր խավարից, ոտքի կանգնել՝ արի և հպարտ՝ գտնել դարերի ճամփան և հասնել խաղաղության: Դա կլինի հայ ժողովուրդի փրկությունը՝ վախճանը նրա դարավոր տառապանքի:

Մեր հոգևոր երգասացները, հաճախ կրոնական ձևի տակ տվել են նաև մեր ժողովուրդի անփառունակ կյանքը, նրա դժգոխտությունն ու ողբերգությունը: Դրանք բարեպաշտական երկյուղածությամբ չէին համարձակվում շատ հեռանալ Աստվածաշնչի ոգուց և տրադիցիաներից, բայց այնուամենայնիվ նրանց երգերում, սահելրում արտահայտվել են մեր ժողովուրդի կյանքը, նրա ապրումներն ու նրա պայքարը: Մեր կրոնական բանաստեղծության մեջ, անհասարակ, տրվում է մեղքի ճիրաններում գալարվող, մեղավորի անհանգիստ հոգու պատկերը, նրա ձգտումը իր «հոգու փրկության»: Բայց հետագայում, քաղաքական դեպքերի գահավեժ դասավորությամբ, երբ «յողրս փոխեցաւ մեզ ամենայն», ամբողջ ազգն է ձգտում իր փրկության, իր հոգեկան խաղաղության, քանի որ նա իր աչքերով է տեսնում իր հայրենի անդաստանի, մշակած դաշտերի, իր բարեխից կյանքի, զվարթ աշխատանքի իր գեղեցիկ և շեն աշխարհի ոչնչացումը: Պարբերական ասպատակություններից կոտորվում է մեր ժողովուրդը, իր հայրենի երկրում կյանքի, պատվի, գույքի անսպասելիություն է տիրում, թողնում է իր հայրենի հողը ու ընկնում պանդըխտության մոայլ ճանապարհների վրա, թափառում օտար աստղերի տակ, միշտ հավածական, միշտ անհանգիստ. «զորս ոչ սուլ սատակեաց՝ ցրտեցան զօրէն մոլորական աստեղաց»:

«Մով կենցաղոյս հանապազ զիս արեկոծէ, մրդկեալ արիք թշնամին ինձ յարուցանէ, նաւապետ բարի, լեր անձին իմոյ պաււնն»: Ապաշխարության այս երգը մեղքի ճիրաններում տոսայտող, մի միստիկ մեղավորի հոգու աղաղակը չէ լուկ, նրա մեջ արտահայտվել է նաև հայ ժողովուրդի «հանապազօրյա արեկոծությունը կյանքի ծովում»:

Մեր կրօնական բանաստեղծության մեջ միշտ զգալի է մեր ժողովրդի խորին վիշաբիր մտայլ իրականության նկատմամբ: Որքան դառնություն կա կաստիվերացու այս տողերի մեջ. «Աշխարհ ամենայն ի խաղաղութեան բնակի, մենք գերիք և կալանա-

կործանած փառքը, կուլտուրական և քաղաքական կյանքի անկումը, քաղաքների և ավանների ավերումը. «ոչ մի օր հանդիպեցաք անդորրութեան... ամենայն ժամանակ աւուրց մերոց լի եղև խոտվութեամբ և նեղութեամբ»: Այս տողերի մեջ է երևում



Գերապատիվ Սանակ Սրբազանը Բարոզ խոսելիս

տրք, սրակոտորք և տնաւերք, լընչից կողոպտածք... քանի՞ դառն է պատմութիւնս և ողբոց արժանի» ... Այս է եղել դարերով մեր ժողովրդի վիճակը, և հենց դա է պատճառը, որ մեր հին պատմագրության մեջ պակաս չի եղել հայրենասիրական ողբազին զգացման զեղումը: Մեր պատմիչները կրակն բառերով երգել են իրենց հայրենիքի

հայ ժողովրդի ապրած ողջ ողբերգությունը: Մի օր անգամ նա խաղաղություն չի ունեցել, մի գիշեր էլ չի քնել հանգիստ քնով. «զհրեշտակ խաղաղութեան ջո առաքեա՛ առ մեզ որ եկեալ պահեսցէ զմեզ անխուղս, ի տուէ և ի գիշերի, յարթութեան և ի հանգրստեան մերում»:

Շնորհալին, իր ժամանակում, իր «Ողբ

Նրանիստ»-ի մեջ ի դեմս Նրեսիայի երգել է
 Հայաստանի և հայ ժողովրդի վիճակն ու
 դառն իրականությունը: Նրա «Բարառնա-
 կան բանը» հեղինակի ժամանակակից
 կյանքի երգը, միաժամանակ և «մեր ժողո-
 վրդի դարավոր վերքերի առաջին բանաս-
 տեղծական ողբն է, հայրենասերի ողբը,
 առաջին վերք Հայաստանին»: Ենորհային
 իր շնորհալիքն քնարով հառաչում է Հայաս-
 տանի համար, որոնում է նրա անցած խա-
 ղաղ շրջանի փառքը, որը իր ժամանակ չկար-
 խորունկ հայրենասիրական տրագեդիա է ապ-
 րում նա վաղուց կորած և հեռացած ազա-
 տություն, խաղաղության համար և իր հո-
 դու փոխանակ ջերմեռանդությամբ ձգտում
 է նորից ունենալ այն հին երկիրը, որ «նման
 էր փթթեալ ծաղկի, պայծառացած ի գոյն
 վարդի», ցանկալի բոլոր հայերի համար:
 Իր հայրենի երկրի և ժողովրդի խաղաղու-
 թյունը վրդովողներին դեմ նա ծառանում է
 իր հավատի ողջ կրթությունով: «Աստուծո՛ւ
 իսպառ կործանեսցէ զքեզ յաւիտեան»: Մեր
 անցյալի գրականությունը, այսպես լայնո-
 րեն է անդրադարձնում ժամանակակից
 կյանքն ու իրականությունը, հասարակական
 և ազգային կյանքի պատկերը, ի հայրե-
 նասիրական ոգևորությամբ: Մեր հոգևոր
 բանաստեղծության մեջ արտահայտված
 մտքերն ու զգացմունքները, մորմոքն ու
 ցավը, հույսերն ու տենչերը լոկ հեղինակի-
 նր շին, այլ նրա ժամանակի հայ ժողո-
 վրդիինը: Զուտ անձնական քնարերգույուն
 անելով հանդերձ, մեր հոգևոր երգասա-
 ները իրենց հոգում զգում են նաև իրենց
 ժամանակի, իրենց հասարակության ապ-
 րումները: Նարեկացին իր «Ողբերգութեան»
 մեջ հայտնում է, թե ինքը ժամանա-
 կի բոլոր դասերի, ամեն հասակի հո-
 դին է ներկայացնում «Նշառակեալ յի-
 րում պատկերի»: Նարեկացին, իբր մեկ
 անդամը այդ հասարակության, դժգոհ է իր
 ապրած դարաշրջանից. նա իրեն զգում է
 հոգով ջախջախված, ինչպես մի խորտակ-
 ված նավ կյանքի ծովում, և դուրս է փախ-
 շում կյանքից. խաղաղություն չկա կյան-
 քում. մարդկային կյանքը և՛ զզվելի է, և՛
 գարշելի նրա համար, չունի ոչ մի լավ բան
 իր մեջ. «Ընտանիք թշնամիք, հարազատք
 հակառակք, որդիք դաւաճանք»: Նարեկացու
 հոգետեսությունը վառ արտահայտությունն
 է իր ժամանակի, հայ ժողովրդի սոցիա-
 լական և քաղաքական, հոգևոր ու կուլտու-
 րական պայմանների: Նա կյանքում ոչ մի
 լավ բան չի տեսնում, բայց և այնպես չի
 կարողանում ուրանալ կյանքն ու աշխարհը:
 Հենց դրա համար էլ իր հոգու, կյանքի ան-
 խաղաղությունից, խռովահույզ սրտից

բխում է, ժայթքում է նրա խոսքը Աստուծո՛ւ
 հետ, իբր «հառաչանքի ձայն, սրտի հեծու-
 թիւն, ողբ ու աղաղակ»:
 Մեր պատմիչները, տաղասացները իս-
 կապես հայ ժողովրդի քաղաքական կյանքի
 ողբերգությունն են տվել: Դրանք, բոլորն էլ,
 հայրենի հողի, ջրի, ուրախ կյանքի, բարգա-
 ված քաղաքների երգիչներն են, ոչ թե սա-
 կայն ցնծությունը ու բերկրանքով, այլ դառն
 վշտով, հառաչանքով. նրանք ոչ թե իրենց
 քնարով ուրախության, հաղթանակի երգ են
 հորինում, այլ ողբերգություն, հայ ժողո-
 վրդի «վերքի» երգը: Նրանք իրենց երկերում
 ոչ թե աշխարհի և կյանքի ունայնությունն
 ու ոչնչությունն են երգում, այլ հայոց գեղե-
 ցիկ ու շեն աշխարհի ոչնչացումը: Նրանք
 սիրում են իրենց հայրենիքը և ցավում են
 որ նա ավեր է. ահա նրանց վշտի աղբյուրը:
 Նրանք հաճախ ապրել են մեր ժողովրդի
 հետ դժնդակ պայմաններում, ակնաստես
 են եղել անձամբ դեպքերին «Երեք փորձ
 շարեացն» անցած, նրանց հայրենասերի
 սիրտը չի դիմացել իրենց տեսածներին և
 լսածներին: Նրանք շին վարողացել պաղար-
 յունությամբ վերհիշել մեր ժողովրդի ան-
 ցած արյունոտ ուղին, և հենց դրա համար
 էլ, իրենց սրտի խորքից հեծեծում և թա-
 րանում են իրենց դժբախտ հայրենիքի և
 ժողովրդի համար, ոչ թե իբր մի միաստիկ
 ձգնավոր աշխարհից կտրված, այլ իբրև մի
 հայրենասեր, որ սիրում է աշխարհը, մանա-
 վանդ Հայոց աշխարհը: «Ըհհա վատարած
 կենաց տանս Հայոց... անրեցան գաւառք...
 մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակ-
 շաց, ոչ լսի ձայն ուրախութեան ի կուլմս
 այգեաց... ոչ խաղան մանկունք ու ոչ լսի
 ձայն հարսանեաց... եղևն շինանիստ աւանք
 բնակութիւն գաղանաց»:
 Բայց այս ամենը երեկ էր, հայ ժողո-
 վրդի անցյալում...
 Այսօր պայծառ է մեր ժողովրդի ներկան,
 է՛լ ավելի հուսալից նրա ապագան: Հայ ժո-
 ղովուրդը աննկուն պայքարի միջոցով հա-
 սել է իր դարավոր երազներին, ձգտումնե-
 րին, նա նվաճել է խաղաղությունը:
 Այսօր մեր ժողովուրդը ունի մի գեղեցիկ
 Հայրենի երկիր, արևելքի դռների առաջ,
 կապույտ և երկնամեծ լեռների ծոցում,
 Մասիսի փեշերի վրա, գետերի կարկաշի և
 ծաղիկների բույրի մեջ: Դեռ այն պատմա-
 կան Հայրենիքի մի սրբազան բեկոր է, որի
 վրայից անցել են հաճախ բարբարոս բռնա-
 կալությունների մարդկային հեղեղներ՝ ու
 ոտքի տակ տրորել մեր շքնաղ Հայրենիքը:
 Նրանք, այդ բռնակալությունները, եկել և
 անցել են, ամենհի փոթորիկների նման,
 նրանց չի հաջողվել ընկճել, նվաճել մեր

ժողովրդի անմեռ, ազատատենչ հոգին և սպրիչու, տեկիու կենսունակութիւնը:

Իր հարազատ Հայրենիքում, մեր ժողովուրդը այսօր բուժում է իր անցյալի վերքերը: Նա տերն է իր հողին, հացին, պատվին, իր ճակատագրին, իր արդար վաստակին: Իր հայրենի հողի վրա՝ աճում է նա մեկի տեղ հարյուր, մեկի տեղ հազար արդյունքներով, ժայռերից վարդեր է քաղում, քարերը վերափոխում է հացի, լույսի, կյանքի և կյանքը դարձնում է անսահման բարիքների մի անսպառ աղբյուր: Խաղաղութիւն և ստեղծագործ աշխատանքի ոգին ընդգրկել է ողջ հայ ժողովրդի: Ամեն կողմ, ամեն քայլին երևում են խաղաղութիւն պայմաններում՝ ստեղծագործ աշխատանքի սխարլի արդյունքները: Ցնորք չի եղել երբեք անցյալում մեր ժողովրդի մեծ վիշտը. երեսուն դարեր տառապել է նա իր կյանքի և պատմութիւն վերջին երեսուն բախտավոր և խաղաղավետ տարիների համար, երբ ի վերջո գտել է խաղաղութիւն և ազգային վերածնութիւն ուլին:

Երեկ սակավաթիվ էինք մենք, այսօր միլիոններ ենք, երեկ մեր ժողովուրդը մի ամի հող ունեւր իբր հայրենիք, որը չէր բաւում նույնիսկ մեր մեռելների համար իբր գերեզման, այսօր մեր հայրենի հողի վրա արեւը մայր չի մտնում:

Երեկ տկար, արհամարհված էր մեր ժողովուրդը, այսօր հզոր է նա և անպարտեյի, մեկ ձեռքում գութան, մյուսում՝ սուր:

Երեկ՝ հալածական քշում էին նրան իր հարազատների արյան ու դիակների միջով դեպի օտարութիւն մութ ու անհուրհուր ճամփաներում մեռնելու, այսօր հաղթական վերադարձ է անում նա մահից դեպի կյանք, օտարութիւնից վերադարձ դեպի հայրենի հողն ու ջրը, երդիքն ու օջախը: Ուր էլ որ գնացել է մեր ժողովուրդը, բախտը ուր էլ որ նետել է, նա իրեն հետ է տարել իր հայրենի երկրի օդին ու ջրին, արտին ու վարին անմոռանալի քաղցրութիւնները և պահել

է նրանց այրող հիշատակը սրտառուչ հավատարմութեամբ, գուրգուրանքով:

Մեր ժողովուրդը այժմ տիրացել է իր երազին, և իր Հայրենիքում իր արդար քրտինքն է խառնում միլիոնավոր մարդկանց քրտինքներին, որոնք աշխարհում նոր կյանք են կառուցում, նոր աշխարհ են կերտում՝ խաղաղութիւն վրա, ժողովուրդների համար աշխուժիւն վրա:

Մեր ժողովուրդը անցյալում շատ է տառապել, տրտմել, լացել, այժմ միայն ուրախանում է, երգում և օրհնում այն փրկարար նախախնամական ձեռքը, որը ճանապարհ է բացել նրա համար դեպի նոր կյանք ու արեւաշող ապագա: Քանի՞ քանի՞ սերունդներ, երկար դարեր, աղոթել, սպասել, երազել են այս երջանիկ օրը իրենց ժողովրդի համար և մահացել են անմուրազ, Հայրենիքի սերը և իրենց ժողովրդի փրկութիւն հույսը իրենց սրտերում, աչքերը հառած հավատով Մասիսին, Էջմիածնին, Սեւանին...

Այսօր, ավելի քան մի այլ ժամանակ, մեր ժողովուրդը նորից է աղոթում Աստուծուն՝ ամենայն աշխարհի» խաղաղութիւն համար: Այսօր, ավելի քան երբեք, մեր ժողովուրդը ակտիվ պայքար է մղում աշխարհի բազմահազար բարի կամքի տեր, խաղաղութիւն ծարավի մարդկանց հետ, մնացուն և տեւական խաղաղութիւն համար, և սրտադին կոչ է անում «ամենեցուն» աչքի լույսի պես պահել ու պահպանել աշխարհում խաղաղութիւնը:

Այսօր, ամբողջ աշխարհում, խաղաղութիւն հրատապ գործը իրենց ձեռքն են վերցրել ժողովուրդները, նրանց շարքում է կանգնել նաև հայ ժողովուրդը, որն իր անցյալի կենսափորձի վրա, ակտիվ պայքար է մղում հանուն խաղաղութիւն:

Անմահ է ժողովուրդը, և անմահ է նաև ժողովրդի գործը: Խաղաղութիւնը կհաղթի աշխարհում: Չարերը միշտ պարտվել և պատժվել են:

Այս է պատմութիւն դասը: Այս է հայ ժողովրդի անսասան հավատը:

